ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, **ք.Երևան**, 0001, **Թումանյան** 17,
հեռ. (+374 10) 510 510, **ֆաքս** (+374 10) 510 573
էլ.փոստ՝ info@inecobank.am,
ինտերնետային կայք՝ www.inecobank.am

«ԻՆԵԿՈԲԱՆԿ»

Տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն

կազմակերպաիրավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, **ք.Երևան**, 0001, **Թումանյան** 17,
հեռ. (+374 10) 510 510, **ֆաքս** (+374 10) 510 573
էլ.փոստ՝ info@inecobank.am,
ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Արժեթղթերի տեսակը	**անվանական, արժեկտրոնային պարտատոմս**	
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային	
Արժեթղթերի քանակը	Թողարկման ծավալին և անվանական արժեքին համապատասխան	
Արժեթղթերի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը	Առավելագույնը 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ	Առավելագույնը 20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	
Շրջանառության ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ	

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ»:

Սույն ազդագրի համար պատասխանատու անձինք

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն, ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Կարեն Սաֆարյան

20.08.2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Աշոտ Ավետիսյան

20.08.18
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Ֆրանց-Յոզեֆ Ֆլոզբախ

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Ալեքսանդր Պավլով

20/08/2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ
Սուլխան Գվալիա

20/08/2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն,
տնօրինության նախագահ
Տիգրան Դավթյան

(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան

20.08.2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Չիլյան

20.08.2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Զարգացման և մարքեթինգի տնօրեն, տնօրինության անդամ
Արեն Նալթակյան

_____ _____
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան

_____ 20/08/2018
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրեն, տնօրինության անդամ
Գառնիկ Թադևոսյան

_____ 20.08.2018թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան

_____ 20.08.2018թ.
(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես սույն ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջինիս ինտերնետային կայքում՝ www.inecobank.am:

1.1 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի ֆիրմային լրիվ անվանումը՝
հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО ЗАКРЫТОГО ТИПА “ИНЕКОБАНК”
անգլերեն՝ “INECOBANK” CLOSED JOINT STOCK COMPANY
Բանկի ֆիրմային կրճատ անվանումը
հայերեն՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ АОЗТ “ИНЕКОБАНК”
անգլերեն՝ “INECOBANK” CJSC
Բանկային գործունեության լիցենզիա թիվ 68
Բանկի գրանցման վկայական թիվ 0169, **գրանցման ամսաթիվ** 07.02.1996**թ.**
Բանկի պետական գրանցման վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17
Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 17
Կապի միջոցները՝ հեռ. (+37410) 56-59-74, (+37410) 51-05-10, ֆաքս (+37410) 51-05-73
էլ. Փոստ՝ info@inecobank.am

Ինտերնետային կայք՝ www.inecobank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել Դիլինգային գործառնությունների բաժնի որևէ մասնագետի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 56-59-74:

Բանկի նկարագիրը

1. Բանկի հիմնադրումը

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Բանկ) հիմնադրվել է 1996թ. փետրվարի 7-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0169, իսկ բանկային գործունեության լիցենզիան՝ N 68: Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 23 մասնաճյուղ, չունի ներկայացուցչություն:

Բանկը ավելի քան 20 տարի գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում՝ մատուցելով ունիվերսալ բանկային ծառայություններ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կորպորատիվ հաճախորդներին: Բանկը առանձնանում է հայաստանյան բանկային շուկայում իր ուրույն կորպորատիվ ոճով: Դրա ձևավորման գործում կարևոր դեր է խաղում «Ինեկոբանկ» ապրանքանիշի զարգացումը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել զգայական և գիտակցական կապ Բանկի ներկա ու հնարավոր հաճախորդների և Բանկի միջև:

Տարիներ շարունակ լինելով ամենաեկամտաբեր և ամենաարագ զարգացող բանկերից մեկը՝ Բանկը մատուցում է կորպորատիվ ու մանրածախ բանկային ծառայություններ: Բանկը որդեգրել է հաճախորդակենտրոն մոտեցում՝ իր ծառայություններն առավելագույնս համապատասխանեցնելով հաճախորդների պահանջմունքներին:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի, երաշխիքների, ակրեդիտիվների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը:

Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա, հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Բանկը հանդիսանում է SWIFT միջազգային վճարային համակարգի, մի շարք միջազգային դրամական փոխանցումների համակարգերի անդամ, ինչպես օրինակ«MoneyGram»,«Unistream»,«IntelExpress», «Sigue» և «Converse Payments» համակարգերը, Visa միջազգային վճարային համակարգի անդամ, ինչպես նաև ArCa վճարային համակարգի լիիրավ անդամ և բաժնետեր, MasterCard միջազգային վճարային համակարգի աֆիլացված անդամ, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայի անդամ, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ:

2. Բանկի առաքելությունը

Բանկի առաքելությունն է խթանել մասնավոր հատվածի զարգացումը՝ հանդես գալով որպես հուսալի և ազնիվ գործընկեր ու խորհրդատու՝ միկրո, ՓՄՁ և անհատ հաճախորդների համար:

Առաքելությունն իրագործելու նպատակով Բանկը իրականացնում է հետևողական աշխատանք՝ մատուցվող բանկային ծառայությունների կատարելագործման և տեսականու ընդլայնման, հաճախորդների բարձրորակ սպասարկման, վարկավորման և նրանց բիզնեսի զարգացման, աշխարհում ընդունված և հաջողված բանկային տեխնոլոգիաների ներդրման, Բանկի հեղինակության բարելավման, Բանկի նկատմամբ վստահության և մրցակցային դիրքի ամրապնդման ու զարգացման ուղղությամբ: Ողջ գործունեության ընթացքում Բանկը միշտ հետևել է այս ուղղորդող սկզբունքներին:

3. Բանկի տեսլական

Բանկի տեսլականն է լինել առաջատար միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց համալիր բանկային ծառայությունների մատուցման ոլորտում:

4. Բանկի արժեքներն են՝

Արդյունք
Բանկը ապահովում է կատարողականության բարձր մակարդակ՝ գերազանց արդյունք ապահովելու համար
Թիմային աշխատանք
Բանկը կրում է մեկ ընդհանուր գաղափար և, հետևաբար, աշխատում համախմբված այդ նպատակին հասնելու համար
Նորարարություն
Բանկն անընդհատ զարգացնում է մատուցվող ծառայությունները և ստեղծում սպասարկման առավել ժամանակակից տարբերակներ, որպեսզի բավարարի հաճախորդների անընդհատ աճող պահանջարկը
Որակ
Բանկը ձգտում է գերազանց որակի աշխատանքում, որը Բանկի հիմնական մրցակցային առավելությունն է
Հաճախորդամետ մոտեցում
Բանկի գործունեության առանցքում հաճախորդներն են և այն ամենը, ինչ Բանկն անում է ուղղված է նրանց պահանջմունքների բացահայտմանը և բավարարմանը:
Հասանելիություն
Բանկը հասանելի է բոլոր հաճախորդների, նույնիսկ շատ ցածր եկամուտ ունեցող անձանց համար: Բանկը ջանում է, որ հաճախորդները Բանկում զգան իրենց հարազատ միջավայրում:

5. Բանկի ապրանքային նշանը

Բանկի ապրանքային նշանը, որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 04.05.2004թ., հետևյալն է՝

6. Բանկի կարգախոսն է՝ «Արժևորե՛ք Ձեր ժամանակը»:

7. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ 28.02.2018թ. դրությամբ, որը բաժանված է 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 80,000 (ութսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հիմնական բաժնետերերն են՝*(համաձայն Ինեկոբանկ ՓԲԸ Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի առ 03.05.2018թ.):*

N	Անուն, Ազգանուն	Սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի քանակը /հատ/	Մասնաբաժինը /%/
1	**Բալոյան Ավետիս Ցոլակի**	54,561	30.01%,
2	**Սաֆարյան Կարեն Գառնիկի**	47,142	25.93%
3	**Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ**	41,274	22.70%
4	agRIF Coöperatief U.A.	18,201	10.01%

03.05.2018թ. Հոլանդական agRIF Coopeartief U.A կազմակերպությունը, որը կառավարվում է Incofin Investment Management ֆինանսական կազմակերպության կողմից ձեռք է բերել International Finance Corporation (IFC) և Deutsche Investitions und EntwicklungsgeselIschaft (DEG) միջազգային ֆինանսական կազմակերպություններին պատկանող Ինեկոբանկի բաժնետոմսերը՝ դառնալով Ինեկոբանկ ՓԲԸ-ի 10.0104% բաժնետոմսերի սեփականատեր:

Բիզնեսի համառոտ նկարագիր.

Բանկն իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները.

Վարկային ծառայություններ, որոնց մեջ կարելի է առանձնացնել՝

Մանրածախ բիզնես

Բանկի հիմնական մրցակցային առավելությունն է մանրածախ վարկավորումը, որը տարիների ընթացքում կատարելագործվել է՝ քայլ առ քայլ կիրառելով նորագույն տեխնոլոգիական լուծումներ: Ընդհանուր առմամբ այս ուղղությունը բաղկացած է ապառիկ վարկավորումից, սպառողական և հիփոթեքային վարկերից:

1. Ապառիկ վարկեր. Բանկն առաջինն էր շուկայում, որը հետևողականորեն զարգացրեց ապառիկ վաճառքի տեխնիկան՝ ներկայացնելով ապառիկը տեղում ծառայությունը, որը էականորեն հեշտացրեց սպառողական տեխնիկայի ապառիկով գնումները, որի արդյունքում նախկինում մի քանի օր տևող գործընթացը հնարավոր եղավ իրականացնել մի քանի րոպեում: Բանկն ապառիկի շուկայում առաջատար է և կշարունակի լինել առաջատար: Սա այն ոլորտն է, որտեղ Բանկը տրամադրում է լավագույն ծառայությունները իր հաճախորդներին:

2. Սպառողական վարկեր. Բանկը տրամադրում է տարբեր նպատակներով սպառողական վարկեր՝ գրավով և առանց գրավի: Այստեղ բանկի վերջին տարվա հաջողությունները առանձնահատուկ շեշտադրման կարիք ունեն, քանի որ 2017 թվականի սկզբում ներդրվեցին արագ սպառողական վարկերը, իսկ վերջում «1 click» վարկերը: Հայաստանում առաջին անգամ կիրառվեց սկզբից մինչև վերջ առցանց վարկավորման գործընթացը, որը, աշխատելով 2017 թվականի վերջին երկու ամիսներին, արդեն իսկ ապահովել է տպավորիչ արդյունք: «1 click» վարկը հնարավոր է ստանալ ցանկացած տեղ, ցանկացած օր և ցանկացած ժամին: Այն հասանելի է Բանկի հաճախորդներին այն ժամանակ, երբ իրենք դրա կարիքն ամենաշատը ունեն:

3. Հիփոթեքային վարկեր. Բանկն առաջարկում է հիփոթեքային վարկեր ՝ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, ինչպես նաև կառուցապատման նպատակով:

Վարկավորումը իրականացվում է ինչպես Բանկի ռեսուրսներով, այնպես էլ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան Երկիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ ծրագրերի շրջանակներում: Բանկն իր ռեսուրսներով նաև տրամադրում է կանաչ Հիփոթեքային վերանորոգման վարկեր, որոնք ուղղված են բնակարանի էներգաարդյունավետության բարձրացմանը: «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության շրջանակներում տրամադրվում են Բնակարանային ԷներգաԱրդյունավետ վարկեր, որոնք ուղղված են բնակարանի / բնակելի տան էներգաարդյունավետության բարձրացմանը, և Մարզային բնակարանային վարկեր, որոնց նպատակն է մարզերում բնակարանների / բնակելի տների ձեռքբերման խթանումը:

Բանկի սքորինգային համակարգը վերջին տարիների ընթացքում էականորեն կատարելագործվել է և թույլ է տալիս իրականացնել վարկունակության գնահատում տարբեր տիպի հաճախորդների համար, հետևաբար նաև

տրամադրել կոնկրետ հաճախորդի վարկունակությանը և կարիքներին համապատասխանող վարկային պրոդուկտ: Բանկի զարգացման տեսլականում մանրածախ ուղղությունը հանդիսանում է գերակա և այն շարունակական կատարելագործվելու է և՛ ակտիվներում տեսակարար կշռի, և՛ մատուցվող ծառայությունների ընդլայնման առումով:

Կորպորատիվ բիզնես

1. Բիզնես վարկեր. Բանկը բիզնես ֆինանսավորման ոլորտում մատուցում է բավականին ընդարձակ ծառայություններ, ինչպես իր ներքին ռեսուրսների հաշվին, այնպես էլ համագործակցող կազմակերպությունների կողմից ներգրավված միջոցների հաշվին: Բանկը համագործակցում է մոտ 30 միջազգային կազմակերպությունների հետ, որոնց շարքին են դասվում KFW, ADB, IFC, EBRD, DEG, FMO, OFID, Incofin Investment Management և այլն:

Բանկի ռազմավարության կարևոր մաս է կազմում Փոքր ու Միջին Ձեռնարկությունների ֆինանսավորումը: ՓՄՁ հաճախորդներին Բանկն առաջարկում է վարկավորման լայն գործիքակազմ տարբեր նպատակներով՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, գյուղատնտեսական վարկեր և այլն:

Բանկը կարևորում է հաճախորդների ֆինանսական կայունությունը և մատուցում է ինչպես ֆինանսական, այնպես էլ իրավաբանական խորհրդատվություն:

Բանկը կորպորատիվ հաճախորդների շրջանակում ունի բարի համբավ իր ճկուն աշխատանքի շնորհիվ:

2. Առևտրի ֆինանսավորման գործիքներ. Բանկը առևտրի ֆինանսավորման ոլորտում ունի ծառայությունների մատուցման արդյունավետ և ամբողջական գործիքակազմ (երաշխիքներ, ակրեդիտիվներ, ինկասոներ և այլն), և ակտիվ համագործակցում է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), ինչպես նաև միջազգային առաջնակարգ մի շարք բանկերի հետ: Բանկը արժանացել է միջազգային մի շարք հեղինակավոր մրցանակների: 2007թ. և 2009 թ. Բանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից ճանաչվել է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում ամենաակտիվ թողարկող բանկ, 2010թ. Գերմանական «Կոմերցբանկի» կողմից ստացել է մրցանակ առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանց համագործակցության համար, իսկ 2016թ. Բանկը ճանաչվել է «Լավագույն գործընկեր բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից:

Ավանդների ընդունում

Բանկն իր ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ժամկետային և ցպահանջ ավանդների ներդրման լայն հնարավորություններ, ինչպես նաև խնայողական հաշվի և նպատակային խնայողական պլանի ընտրման ճկուն

տարբերակներ: Ավանդի տեսակները առավելագույնս հարմարեցված են հաճախորդների պահանջներին և նպատակներին: Իրավաբանական անձ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար Բանկը նույնպես նախատեսել է ավանդների ներդրման գրավիչ տարբերակներ՝ ավանդի ժամկետից և արժույթից կախված ճկուն սակագներով: Ավանդատեսակների նպատակների և պայմանների միջև ճիշտ հավասարակշռության պահպանման շնորհիվ վերջին տարիների ընթացքում Բանկը շարունակաբար գրանցում է ավանադատու հաճախորդների ցանկի ընդլայնում և ավանդային պայմանագրերի վերակնքման բարձր ցուցանիշ:

Գործառնություններ արժեթղթերով և ոսկով

1. Գործառնություններ պետական և կորպորատիվ արժեթղթերով
2. Բրոքերային ծառայություններ
3. Անկանխիկ ոսկով գործառնություններ
4. Պահառուական ծառայություններ

Այլ հաշվարկադրամարկղային ծառայություններ, որոնք ստանդարտ, ավանդական բանկային ծառայություններ են և իրենց մեջ ներառում են՝

1. Դրամական փոխանցումներ
2. Միջազգային փոխանցումներ
3. Արտարժութային փոխարկումներ և այլն

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

Բանկի եկամտաբեր ակտիվները

	31.12.2017	31.12.2016	31.12.2015
Ակտիվներ, այդ թվում.	**277,842,150**	**236,196,296**	**236,402,096**
Եկամտաբեր ակտիվներ	**219,399,961**	**186,900,534**	**170,404,471**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	173,066,076	160,154,905	154,638,426
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	2,884,563	1,901,172	749,218
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	12,142,142	1,574,060	956,718
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	31,307,180	23,270,397	14,060,109
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	**79.0%**	**79.1%**	**72.1%**

- **Բանկն ունի Գլխամասային գրասենյակ և 23 մասնաճյուղ** *(28.02.2018թ. դրությամբ)*

Անվանում	Հասցե
Գլխամասային գրասենյակ	ք. Երևան, Թումանյան փ. 17
	ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ
Աբովյան 18 մասնաճյուղ	ք. Երևան, Աբովյան փ. 18,
Կորյուն մասնաճյուղ	ք. Երևան, Տերյան 105/1
Մաշտոց մասնաճյուղ	ք. Երևան, Մաշտոց պ. 18, շ. 52/1
Արաբկիր մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ., 38/2 շենք -62
Կոմիտաս մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի պ. 39 շ. թ. 78
Կոմիտաս 2 մասնաճյուղ	ք. Երևան, Կոմիտասի 54բ., 1 շինություն
Նոր Նորք մասնաճյուղ	ք. Երևան, Նոր Նորք, Գայի պող. 15/9, շ. 17/1
Աջափնյակ մասնաճյուղ	ք. Երևան, Բաշինջաղյան փողոց, հ. 192/8,
Մալաթիա մասնաճյուղ	ք. Երևան, Րաֆֆու փ. 39 շենք, 64 տարածք
Շենգավիթ մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց 22/3փ, շինություն 105
Շենգավիթ 2 մասնաճյուղ	ք. Երևան, Բագրատունյաց փողոց 15 շ., շին թիվ 120
Տիգրան Մեծ մասնաճյուղ	ք. Երևան, Տիգրան Մեծ պող. 29ա-95
Զեյթուն մասնաճյուղ	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Պարույր Սևակ փ. 51/9
Ավետիսյան մասնաճյուղ	ք. Երևան, Ավետիսյան 63/41
Խորենացի մասնաճյուղ	ք. Երևան, Խորենացի փ. 15, "Էլիտ Պլազա" Բիզնես Կենտրոն, առաջին հարկ

Գյումրիի մասնաճյուղ	ք. Գյումրի, Ալեք Մանուկյան փ. 6
Վանաձորի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 75
Լոռի մասնաճյուղ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծ փ. 41ա
Արմավիրի մասնաճյուղ	ք. Արմավիր, Հանրապետության փ. 17
Հրազդանի մասնաճյուղ	ք. Հրազդան, Օգոստոսի 23 - 46/100
Աբովյան մասնաճյուղ	ք. Աբովյան, Սահմանադրության հրապարակ 7/3
Աշտարակ մասնաճյուղ	ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապ. 2, բնակ. տան 1-ի հարակից տարածք
Արտաշատ մասնաճյուղ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23փ, թիվ 93

Բանկը չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

1.2 ԲԱՆԿԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐ

Բանկն, ինչպես ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները պետք է տեղյակ լինեն իրենց կողմից կատարված ներդրումների հետ կապված ռիսկերին նախքան Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ձեռք բերելը:

- Պարտատոմսերում ներդրում կատարողները առնչվում են ինչպես տվյալ պարտատոմսերը թողարկող կազմակերպության՝ Բանկի գործունեության

հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի (շուկայական ռիսկ) հետ:

Բանկի ռիսկը կապված է վարկային, գործառնական, իրացվելիության և շուկայական ռիսկերի հետ: Տվյալ ռիսկերը կարող են հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման: Մասնավորապես, Բանկի համար առավել էական ռիսկերն են.

1. Գործընկերների կամ վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով:

2. Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

3. Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում: Նման փոփոխությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել Բանկի տոկոսային մարժան:

4. Ընդհանուր տնտեսության ռիսկեր. ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության, մասնավորապես վարկավորման ծավալների վրա:

5. Օրենսդրական ռիսկ. Օրենսդրական դաշտի փոփոխությունները ևս կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա:

6. Գործառնական ռիսկը բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որը առաջանում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկանց և համակարգերի, կամ արտաքին գործոնների պատճառով:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերից կարելի է առանձնացնել՝

1. Տոկոսադրույքի ռիսկ. Այս ռիսկը կարող է էական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գրավչության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, ինչի արդյունքում էլ ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:
   Նշված ռիսկը, սակայն, էական է այն դեպքում, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարվելը:

2. Արտարժույթի ռիսկ. Այս ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա: Կախված այն բանից, թե ինչպիսի նպատակով է կատարվում ներդրումը, հետագայում դրանք ՀՀ դրամի կամ ԱՄՆ դոլարի փոխարկելիս հնարավոր են կորուստներ:

3. Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ. Պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու հետ կապված հնարավոր են խնդիրներ՝ կախված շուկայում առկա իրավիճակից: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում, սակայն իրացվելիության ռիսկը այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

1.3. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

1.4. ԲԱՆԿԻ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ

Բանկի 2015, 2016 և 2017 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ -ի հասցեն է ՝ ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյանի փ. 26/1, «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ.՝ +37410 56-67-62, ֆաքս՝ +37410 56-67-62, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.kpmg.am:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:
«Քեյ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:
Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5 ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝



Բաժնետերերի ընդհանուր ժողով

Սույն Ծրագրային ազդագիրը կազմելու պահին Բանկի հիմնական բաժնետերերն են՝ *(համաձայն Ինեկոբանկ ՓԲԸ Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի առ 03.05.2018թ.)*:

1	**Բալոյան Ավետիս Ցոլակի**	Հանդիսանում է Բանկի 54,561 (հիսունչորս հազար հինգ հարյուր վաթսունմեկ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (30.01%)
2	**Սաֆարյան Կարեն Գառնիկի**	Հանդիսանում է Բանկի 47,142 (քառասունյոթ հազար հարյուր քառասուներկու) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (25.93%)
3	**Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ**	Հանդիսանում է Բանկի 41,274 (քառասունմեկ հազար երկու հարյուր յոթանասունչորս) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (22.70%)
4	agRIF Coöperatief U.A.	Հանդիսանում է Բանկի 18,201 (տասնութ հազար երկու հարյուր մեկ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերը (10.01%)

03.05.2018թ. Հոլանդական agRIF Coopeartief U.A կազմակերպությունը, որը կառավարվում է Incofin Investment Management ֆինանսական կազմակերպության

կողմից ձեռք է բերել International Finance Corporation (IFC) և Deutsche Investitions und EntwicklungsgeseIlschaft (DEG) միջազգային ֆինանսական կազմակերպություններին պատկանող Ինեկոբանկի բաժնետոմսերը՝ դառնալով Ինեկոբանկ ՓԲԸ-ի 10.0104% բաժնետոմսերի սեփականատեր:

Բանկի խորհուրդը

14.08.2018թ. դրությամբ Բանկի խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից՝

1	**Կարեն Սաֆարյան**	խորհրդի անդամ
2	**Աշոտ Ավետիսյան**	խորհրդի անդամ
3	**Ֆրանց-Յոզեֆ Ֆլոզբախ**	խորհրդի անդամ
4	**Ալեքսանդր Պավլով**	խորհրդի անդամ
5	**Սուլխան Գվալիա**	խորհրդի անդամ

Բանկի Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի գործադիր տնօրենը և Բանկի տնօրինությունը:
Բանկի Տնօրինությունը 14.08.2018թ. դրությամբ կազմված է 7 անդամից՝

1	**Տիգրան Դավթյան**	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
2	**Գառնիկ Թադևոսյան**	Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրեն, տնօրինության անդամ
3	**Արեն Նալթակյան**	Զարգացման և մարքեթինգի տնօրեն, տնօրինության անդամ
4	**Վաղինակ Խաչատրյան**	Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
5	**Արտեմ Չիչյան**	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
6	**Հայկ Ոսկանյան**	Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
7	**Լևոն Ռուբինյան**	Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ

Բանկի աշխատակիցների թիվը ներկայացված է ստորև՝

	2017թ.	2016թ.	2015թ.	2014թ.
Աշխատակիցների թիվը	829	793	686	667

Սույն Ծրագրային ազդագիրը կազմելու պահին՝ 28.02.2018թ. դրությամբ, Բանկի աշխատակիցների թիվը կազմում է 825:

1.6 ԲԱՆԿԻ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը մինչ այժմ թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես և պարտատոմսեր:
2009թ. Բանկը թողարկել է 350,000,000 (երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով զեղչատոկոսային պարտատոմսեր:
Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 14,545,680,000 (տասնչորս միլիարդ հինգ հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:
Համաձայն Բանկի կանոնադրության՝ կանոնադրական կապիտալը կազմված է թվով 181,821 (մեկ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանմեկ) հատ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 80,000 (ութսուն) հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

1.7 ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Տեսակը	Անվանական, արժեկտրոնային	
Ձևը	ոչ փաստաթղթային	
Փոխարկելիությունը	ոչ փոխարկելի	
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Թողարկման ընդհանուր ծավալը	Առավելագույնը 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ	Առավելագույնը 20,000,000 (քսան միլիոն) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը	որոշվելու է յուրաքանչյուր թողարկման համար ըստ տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալի և անվանական արժեքի:	
Տեղաբաշխման օրը	տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	կիսամյակային	
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Շրջանառության ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Մարման օրը	ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:	
Շրջանառության ձևը	ազատ շրջանառության իրավունքով	
Պարտատոմսերի ապահովվածությունը	ապահովված չեն	

Ե՛վ դրամային, և՛ դոլարային պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: Մասնավորապես, դոլարային պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի վճարումը կատարվում է արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք ներդրողներին) ենթակա է որոշման Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Նույն որոշմամբ սահմանվում է նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (Այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով կամ Ֆոնդային բորսայից դուրս:

Պարտատոմսերում ներդրում իրականացնելու ցանկություն հայտնող անձը (ֆիզիկական կամ իրավաբանական) կարող է ձեռք բերել պարտատոմսեր գնման հայտ-հանձնարարական ներկայացնելու միջոցով (Ֆոնդային բորսայից դուրս) կամ Բորսայում՝ Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպությունների միջոցով՝ վերջիններիս ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է շուկայից միջոցների ներգրավումը, ինչպես նաև հնարավոր ավանդատու-ներդրողների քանակի ընդլայնումը՝ վերջիններիս առաջարկելով միջոցների ներդրման տարբերակված մեխանիզմներ:

Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են Բանկի կողմից միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին վարկերի տրամադրմանը:

1.8. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հերթական տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:
Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները:

1.9 ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ստորև ներկայացվում են Բանկի 2015-2017թթ. ամփոփ ֆինանսական տվյալները.

Ամփոփ ֆինանսական արդյունք

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	27,407,196	25,832,960	18,198,358
Տոկոսային ծախս	11,721,567	(12,012,074)	(8,650,911)
Զուտ տոկոսային եկամուտ	15,685,629	13,820,886	9,547,447
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,824,114	1,597,579	1,279,578
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(657,446)	(521,428)	(197,138)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	1,166,668	1,076,151	1,082,440
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	(24,532)	73,264	53,969
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	1,100,470	948,921	775,213
Զուտ օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	11,817	47,694	26,126
Այլ գործառնական եկամուտ	1,931,633	1,711,632	1,170,087
Գործառնական եկամուտ	19,871,685	17,678,548	12,655,282
Օգուտ զեղչով ձեռքբերումից	22,554	466,448	788,576
Արժեզրկումից կորուստներ	(4,144,845)	(4,586,134)	(2,693,255)
Աշխատակազմի գծով ծախսեր	(4,112,946)	(4,214,244)	(2,838,802)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,692,018)	(2,828,018)	(1,966,325)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	8,944,430	6,516,600	5,945,476
Շահութահարկի գծով ծախս	(1,919,898)	(1,359,030)	(1,129,668)
Շահույթ տարվա համար	7,024,532	5,157,570	4,815,808
Այլ համապարփակ վնաս[a] առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն	762,893	1,080,057	(378,691)
- Շահույթ կամ վնաս փոխանցված Իրական արժեքի զուտ փոփոխություն	(9,454)	(38,155)	(20,901)
Այլ համապարփակ վնաս տարվա համար՝ առանց շահութահարկի	753,439	1,041,902	(399,592)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	7,777,971	6,199,472	4,416,216

Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49,012,237	40,892,884	58,244,672
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	393
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	31,307,180	20,689,709	3,888,735
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	-	2,580,688	10,171,374
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	2,884,563	1,901,172	749,218
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	12,142,142	1,574,060	956,718
Հաճախորդներին տրված վարկեր	173,066,076	160,154,905	154,638,426
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4,894,345	4,778,646	5,096,228
Այլ ակտիվներ	4,535,607	3,624,232	2,656,332
Ընդամենը ակտիվներ	*277,842,150*	*236,196,296*	*236,402,096*
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	5,440
Բանկերի ավանդներ և մնացորդներ	29,647	1,482,169	1,643,739
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	2,535,884	9,972,857
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	140,773,746	110,359,788	84,710,900
Այլ փոխառություններ	83,784,411	74,949,509	96,347,105
Ընթացիկ հարկային պարտավորություններ	1,116,970	111,814	7,755
Հետաձգված հարկային պարտավորություններ	2,044,033	1,935,040	1,387,351
Այլ պարտավորություններ	1,850,301	1,356,974	1,118,651
Վճարվելիք հատուցում	-	-	442,652
Ընդամենը պարտավորություններ	229,599,108	*192,731,178*	*195,636,450*
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	14,545,680	14,545,680	14,545,680
Էմիսիոն եկամուտ	7,753,923	7,753,923	7,753,923
Հողի և շենքերի վերագնահատումից աճ	1,562,516	1,581,182	1,599,848
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	1,629,109	875,670	(166,232)
Չբաշխված շահույթ	22,751,814	18,708,663	17,032,427
Ընդամենը սեփական կապիտալ	48,243,042	*43,465,118*	*40,765,646*
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	277,842,150	*236,196,296*	*236,402,096*

Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ.

Բանկի հիմնական բաժնետերերն են՝

N	Անուն, Ազգանուն	Սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի քանակը /հատ/	Մասնաբաժինը /%/	Բանկի գործունեությունից Դուրս ծավալած գործունեությունը
1	**Բալոյան Ավետիս Ցոլակի**	54,561	30.01%,	չկա
2	**Սաֆարյան Կարեն Գառնիկի**	47,142	25.93%	չկա
3	**Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ**	41,274	22.70%	ներդրումային բանկային գործունեություն
4	agRIF Coöperatief U.A.	18,201	10.01%	Ներդրումային ֆոնդ

03.05.2018թ. Հոլանդական agRIF Coopeartief U.A կազմակերպությունը, որը կառավարվում է Incofin Investment Management ֆինանսական կազմակերպության կողմից ձեռք է բերել International Finance Corporation (IFC) և Deutsche Investitions und Entwicklungsgesellschaft (DEG) միջազգային ֆինանսական կազմակերպություններին պատկանող Ինեկոբանկի բաժնետոմսերը՝ դառնալով Ինեկոբանկ ՓԲԸ-ի 10.0104% բաժնետոմսերի սեփականատեր:

Խորհուրդ

	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Իրավասություններն ու պարտականությունները	Բանկի գործունեությունից Դուրս ծավալած գործունեությունը
1	**Կարեն Սաֆարյան**	Խորհրդի անդամ	ք. Կիև, Ուկրաինա	Մասնակցում են Խորհրդի նիստերին,կարծիք/առաջարկություն են ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամներն իրենց պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով,	չկա
2	**Աշոտ Ավետիսյան**	Խորհրդի անդամ	ք. Երևան, Հայաստան		գիտահետազոտական աշխատանքներ
3	**Ֆրանց-Յոզեֆ Ֆլոզբախ**	Խորհրդի անդամ	ք. Բոն, Գերմանիա		Ինքնազբաղված, «Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ», Լյուքսեմբուրգ «Ատլանտիկ Գրուպա» ՓԲԸ, Զագրեբ, Խորվաթիա "Բանկ Ցենտր Ինվեստ" ԲԲԸ,

				Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	Ռոստով Դոն, Ռուսաստան «Ֆրանսա Բանկ» ԲԲԸ Մինսկ, Բելառուս
4	**Ալեքսանդր Պավլով**	Խորհրդի անդամ	ք. Կիև, Ուկրաինա		Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
5	**Սուլխան Գվալիա**	Խորհրդի անդամ	ք. Թբիլիսի, Վրաստան		«Ի-Սփեյս » ՍՊԸ, Վրաստան

Գործադիր մարմին

	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Բնակության վայր	Բանկի գործունեությունից Դուրս ծավալած գործունեությունը
1	**Տիգրան Դավթյան**	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ	ք. Երևան, Հայաստան	Չկա
2	**Գառնիկ Թադևոսյան**	Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
3	**Արեն Նալթակյան**	Զարգացման և մարքեթինգի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
4	**Վաղինակ Խաչատրյան**	Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
5	**Արտեմ Չիչյան**	Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա
6	**Հայկ Ոսկանյան**	Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	«Տնօրենների Հայկական Ինստիտուտ» ՀԿ
7	**Լևոն Ռուբինյան**	Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ	ք. Երևան, Հայաստան	Չկա

Տնօրինության անդամներն իրենց իրավասություններն իրականացնում են Տնօրինության նիստերի միջոցով, Տնօրինության լիազորությունների շրջանակներում, նիստերին մասնակցելու և քվեարկությամբ որոշումներ ընդունելու միջոցով: